Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԻՐ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԵՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 12-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՏՐՎԱԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

(5 նոյեմբերի, 2011 թ.)

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության
Հարգարժան պետական այրեր,
Գերաշնորհ, հոգեշնորհ, արժանապատիվ հայրեր,
Սիրելի բարեպաշտ հայորդիներ.

Գոհություն ենք մատուցում Աստծուն, որ խաղաղ ու հաղթական ժամանակներ են սկսվել ազգային մեր կյանքում, երբ իրականություն է հայոց անկախ պետականության դարերի մեր երազը, երբ՝ հակառակ առկա մարտահրավերների եւ դժվարությունների, զարթոնք է ապրում ազգային եւ եկեղեցական կյանքը Հայրենիքում եւ Սփյուռքում:

Մեր պատմությունը շատ առիթներ չի ընձեռել, որ մեր ժողովրդը խաղաղության մեջ կառուցի իր կյանքը, շենացնի իր երկիրը եւ կյանքի կոչի իր հույսերն ու իղձերը: Շատ չեն եղել ժամանակները, երբ համախմբվեին աշխարհասփյուռ հայության ներուժն ու կարողությունները եւ, ինչպես այսօր, ուղղորդվեին Հայաստան ու Արցախ մեր երկրի զորացմանն ու բարօրությանը, մեր ազգային կյանքի զարթոնքին, մեր լուսավոր գալիքի կառուցմանը: Հաճախ չի եղել, երբ արդյունավորվել են բարեկամությունն ու համագործակցությունը այլ երկրների հետ, լսելի դարձել մեր արդար դատը, ինչպես այսօր է միջազգային մեծ հնչողությամբ բարձրաձայնվում Հայոց Ցեղասպանության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման հարցը: Միշտ չէ, որ հնարավոր է եղել, որ հայրենաբնակ եւ Սփյուռքի հայորդիները հայոց պետական դրոշի ներքո միասնաբար փոնախմբեին մեր ազգային փոները, իրականացնեին համահայկական ծրագրեր ու միջոցառումներ: Արդարեւ, երջանիկ Հայրապետ ենք Մենք, որ շնորհն ունենք օրհնելու հայոց ազատ կյանքը, տեսնելու հայրենի երկրի ձեռքբերումները, նաեւ Մեր զավակների կամքն ու վճռականությունը՝ հաղթահարելու առկա խնդիրները եւ արձանագրելու նոր հաջողություններ: Երջանիկ Հայրապետ ենք Մենք տեսնելով, որ մեր Սուրբ Եկեղեցին մեր անկախ պետականության պայմաններում է իրագործում տերունապատվեր իր առաքելությունը, որ զորանում են մեր ժողովրդի զավակների սերն ու նախանձախնդրությունը հանդեպ Մայր Եկեղեցին, հայոց հոգեւոր կենտրոն Սուրբ Էջմիածինը եւ սրբազան մեր արժեք-

ները: Այս զգացումներով, գոտեպինդ սրտով ու հուսառատ հոգով Մեր խոսքն ենք բերում Ձեզ, սիրելիներ, ու Մեր Հայրապետական օրհնությունը:

Միշտ պիտի հիշենք, որ փորձությունների ու նեղությունների մեջ, գոյապայքարի մեծ մարտահրավերների դիմաց, պատմության վճռական հանգրվաններում մեր ժողովուրդը ապավինած Աստծուն՝ զորացել է եղբայրսիրությամբ, ճշմարտության, արդարության արժեքներով, զորացել է հավատով, որ «Տէրն իր ժողովրդին զօրութիւն պիտի տայ» (Սաղ. ԻԹ 11), ինչպես օրհներգում է սաղմոսերգուն: Տիրոջ հետ եւ միասնաբար մեր մաքառումները պսակվել են ձեռքբերումներով, մեր փորձությունները՝ հաղթանակներով, մեր դժվարություններն ու նեղությունները՝ ազգային վերազարթոնքով: Միաբանությամբ մեր կյանքը պիտի առատանա ու զորանա Տիրոջ պարգեւներով, մեր ազնիվ գործերն ու արդար նպատակները պիտի հաջողությամբ պսակվեն, երբ ամուր մնանք հավատքով եւ սիրով ազգի, Եկեղեցու եւ Հայրենիքի հանդեպ: Հիրավի, Աստված պարգեւել է մեզ Հայրենիքն ու Սուրբ Էջմիածինը, որպեսզի պատվար ունենանք ամուր կանգնելու եւ լույս ունենանք առաջնորդվելու:

Փառք ենք մատուցում Տիրոջը, սիրելիներ, որ ազգիս զավակները Հայրենիքում եւ Սփյուռքում ապրում են եկեղեցասեր ընթացքով, եկեղեցաշեն ու հայրենանպաստ գործերով: Մեր Սուրբ Եկեղեցու ամեն հաջողության մեջ, ազգային մեր կյանքի, մեր Հայրենիքի ամեն առաջընթացում հավատավոր ու հայրենասեր հայ մարդու նվիրումի ու ընծայաբերումի պայծառազարդ դրոշմն է: Ներկայիս, երբ ազատ ու անկախ է հայրենի մեր երկիրը, երբ մեզ հույսեր են պարգեւում ազգային եւ եկեղեցական կյանքում մեր ձեռքբերումները, առավել մեծ է հրամայականը մեր ժողովրդի համախումբ ջանքերը, կարողություններն ու հնարավորությունները գործադրելու համազգային նպատակների իրականացման, Հայրենիքի հզորացման, Եկեղեցու պայծառության համար: Մեր կյանքում դեռ ծառացած են մարտահրավերներ, հրատապ լուծման կարոտ խնդիրներ քաղաքական, ընկերային, տնտեսական, մշակութային ասպարեզներում, դեռ պայքարում ենք Հայոց Ցեղասպանության համընդհանուր դատապարտման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման համար, հուզող հարցեր ու մտահոգություններ կան նաեւ եկեղեցական անդաստանում: Սակայն հավատում ենք, որ Աստծո օգնությամբ հաղթահարելու ենք ամեն դժվարություն: Հավատում ենք, որ Հայաստանի ու Արցախի խաղաղ, բարօր ու բարգավաճ կյանքը կառուցելու, մեր Սուրբ Եկեղեցին առավել զորեղ եւ պայծառ տեսնելու նախանձախնդրությամբ մեր ժողովուրդը կերտելու է իր նոր կյանքի վերածնունդը, լուսավոր գալիքն ու հարատեւությունը: Այս վստահությամբ է գործում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որը եղել եւ մնում է ներշնչանքն ու փառքը հայոց:

Սիրելի հավատավոր զավակներ Մեր, Հայրապետական Մեր սերը եւ Սուրբ

Էջմիածնի առատ օրհնություններն ենք վերստին բերում Ձեզ ամենքիդ, ինչպես նաեւ՝ Մեր պատգամն ու հորդորը, Հայրական Մեր սիրառատ հրավերը, որ նույն որդիական սիրով ու նախանձախնդրությամբ շարունակեք ձեր ջանքերը բերել մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Հայրենիքի կյանքին: Վերազարթոնքի նոր հորիզոններ են մեր առջեւ, որոնք պիտի լուսավորվեն մեր անմնացորդ նվիրումով ու միասնական ջանքերով, Հայրենիքին զորակից լինելու պատրաստակամությամբ եւ մշտական սատարումով Հայաստանի Հանրապետության Նախագահի եւ հայրենի իշխանությունների հայրենօգուտ ու ազգանպաստ ծրագրերին:

Մեր բարեմաղթանքն ենք բերում Ձեզ, Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ տիար Սերժ Սարգսյան, հայոց պետական այրերին եւ հայցում, որ Տիրոջ հովանին եւ պահպանությունը միշտ ուղեկից լինեն Ձեզ՝ պարգեւելով նոր, մնայուն ձեռքբերումներ Հայրենիքի շենացման, մեր ժողովրդի բարօրության ու լուսավոր մեր գալիքի կառուցման գործում: Հայրենիքի նվիրյալ սպասավորին Աստված միշտ զորավիգ ու աջակից է: Այս է նաեւ այսօրվա Մեր մաղթանքն ու աղոթքը, որ Տերը զորավիգ լինի Ձեզ հայրենաշինական Ձեր բոլոր իրագործումներում: Հայցում ենք Տիրոջ օրհնությունն ու շնորհները Ձեզ բոլորիդ, սիրելի բարեպաշտ զավակներ, Ձեր եկեղեցասեր ու հայրենանվեր գործերին եւ մաղթում, որ Տերը քաջառողջ պահի Ձեզ եւ Ձեր ընտանյաց անդամներին՝ պարգեւելով երջանիկ կյանքի երկար օրեր: Մեր գնահատանքն ենք բերում մեր ուխտյալ եկեղեցական դասին, Գերագույն Հոգեւոր Խորհրդի բարեջան անդամներին, այս օրերի հանդիսությունների կազմակերպման գործում իրենց ջանքերը բերած բոլոր անձանց՝ մաղթելով նոր օրհնյալ արդյունքներ իրենց նվիրյալ ծառայության մեջ:

Աղոթում ենք, որ աստվածային լույսի եւ օրհնության խորանաշատ դռները միշտ բացված լինեն հայոց աշխարհի, աշխարհասփյուռ հայության վրա, եւ միշտ բանուկ լինի դեպի Մայր Հայրենիք առաջնորդող հայորդյաց ճանապարհը: Թող Տերը օրհնի եւ միշտ պայծառ պահպանի հայրենի մեր պետությունը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, հավատքով զորացյալ եւ համախումբ՝ համայն ազգս հայոց: